

ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱՐԱԹ 16 ՓԵՏՐՎ. 1907. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵՐԿՈՒ ՉԱՅՆ


Ստորև կը հրատարակենք Ալեքսանդրիոյ ազգային խնդրին նուիրուած երկու յօդուած երկուքն ալ հեղինակաւոր գրիչներէ սխաձ:

Յօդուածագիրները՝ մտաւոր անցեալի մը մէջ իրարու հակառակորդ՝ անզական խնդիրներու պայքարին ստեն, այսօր, Էդուարդին քուէովը, աթուակից եղած են Երեսօխմանական ժողովին մէջ:

Ժողովին մէջ պաշտօնապէս քով քովի բազմելէ առաջ, այսօր Ազատ Խօսքի էջերուն մէջ քով քովի իրենց կարծիքը կուգան յայտնել տեղական խնդրի արդի կացութեան մասին:

«Զիժենիի վերամբարձ ստան» է որ վերջապէս կ'երեւայ:

Հ. Հ. Հ.ի աչքը լոյս:



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

Սզատ Խօսքի նախորդ թիւին մէջ գրած էիք արգէն թէ տեղական ազգային խնդրին բաւոք վերջաւորութիւն մը տալու աշխատութիւնները վերսկսուած են և թէ այդ նպատակով անպաշտօն հաւաքոյթ մալ տեղի անեցած է անցեալ կիրակի օրը Վսեմ. Արթին պէյ Րէիլեանի ընակարանին մէջ:

Չեր փափաքին համեմատ, իբրև այդ հաւաքոյթին ներկաներէն մին, կողգամ հետեւեալ տեղեկութիւնները տալ, մէկ քանի խորհրդածութիւններ աւելցնելով:

Հաւաքոյթին հրաւիրուած էին բաւական թուով ընտրուած ելեւսփոխաններ և մէկ քանի ծանօթ անձնաւորութիւններ:

Վսեմ. Րէիլեան պէյ նախ տեղեկացուց ժողովականաց Սրբ. Պատրիարք հօր և Վսեմ Պօղոս փաշա նուպարի միջև փոխանակուած թղթակցութիւնները: Այդ թղթակցութեանց պարունակութիւնն այս է. Սրբ. Պատրիարք հայրը չ'առարկէ թէ՛ քանի որ Աղեքսանդրիա և Փահիրէ միակ առաջնորդական վիճակ մը կը կազմեն և Աղեքսանդրիա ստորագասեալ է Փահիրէէն, Աղեքսանդրիացիները իրաւունք չունին զատ երեսփոխանական ժողով մը ընտրելու իրենց համար: Ուստի Աղեքսանդրիացիներուն այս սխալը ճանչնալու և իրերը իրենց կանոնաւոր և օրինական

ձեին վերածելու համար՝ Արք. պատիա չք հայրը
կը գիտէր Վսեմ: Պօղոս փայայի միջնորդու-
թեան:

Վսեմ: Պօղոս փայա կը պատասխանէ թէ՛
որչափ որ ինք չի տիրեր Աղեքսանդրիոյ ներքին
խնդիրներուն միջամտել, բայց ինքն ալ Ա-
ղեքսանդրիոյ առկախ խնդիրներուն վերջնական
կարգողութեանը և համերաշխութեան և խա-
զաղութեան ընդմիջո վերահաստատմանը ջեր-
մապէս փափաքող ըլլալով պիտի աշխատի կա-
րելիութեան սահմանին մէջ օգտակար ըլլալ այդ
ուղղութեամբ իբրև միջնորդ մը: Բայց գիտել
կուտայ Ս. Պատիա չքին թէ Աղեքսանդրիոյ խն-
դիրը խիստ կնճռոտ ու գծուարին գարձած է և
խիստ փափուկ կացութիւն մը առաջ եկած է
երկարատև անհամաձայնութեան և պայքարնե-
րու երեսէն:

Վսեմ: Բէիզեան պէյ ներկաներէն խնդրեց
պարզել իրենց տեսութիւնները թէ ի՞նչ կերպով
կարելի է լուծում տալ տեղական խնդրին:

Ներկաները միաձայնութեամբ յայտնեցին:

Ա. Թէ Աղեքսանդրիա թէև մէկ առաջնոր-
դական վիճակ կը կազմէ Գահիրէի հետ, բայց
փորձականապէս միշտ անկախ եղած է անկէ:

Բ. Թէ այս կացութիւնը ունի իր հիմնական
պատճառները՝ հաստատուած ըլլալով տեղական
հանգամանքներու պահանջքին վրայ:

Գ. Թէ հիմնապէս Ազգքսանդրիա իրաւունք
ունի իր առանձին համարատու և համարաու
մատիկներն ունենալու:

Գ. Թէ երեսփոխանական ժողովի ընտրու-
թեամբ ստեղծուած նոր գաւթիւնը պատկումն
է բովանդակ Ազգքսանդրիոյ հայ գաղութին իզ-
ձերուն, առանց կուսակցական կամ դասակար-
գային ո և է խտրութեան կամ բացառութեան:

Ե. Թէ այս հաստատուած դրութեան վա-
ւելացմամբ և պահպանութեամբ միայն վերջ
կը գտնեն Ազգքսանդրիան երկար ատենէ ի վեր
բաժանող գժտութիւնները և անհամաձայնու-
թիւնները: Արդէն ընտրութեանց պահուն իյայտ
եկած խանդավառութիւնը եւ համերաշխութիւնը
ապացոյց մ'էին թէ վերջնապէս այս նոր կազմա-
կերպութեամբ գտնուած էր ճշմարիտ և տեական
խաղաղացումի ամենէն հաստատուն կուռանը
և միակ գործնական և օրինական ելքը տեղա-
կան գժուարութիւններուն:

Ի վերջոյ ներկաները իրենց բացարձակ վս-
տահութիւնը յայտնեցին Վսեմ. Պօղոս փաշա
Նուպարի բարեացակամութեան և իմաստութեան
վրայ և խնդրեցին Վսեմ. Ռէիզեան պէյէն որ
ազգու կե պով գիւում ընէ նորին Վսեմութեան
մօտ որպէս զի Ազգային կեդրոնական Վարչու-
թեան առջև թաշգման հանդիսանայ Ազգքսան-
դրիոյ հայ հասարակութեան միահամուռ բազ-
ձանքներուն և անձամբ միջամտէ Ս. Պատրիարք

հօր մօտ սպասելի, եթէ երբեք ինչ ինչ ձեակերպութիւններ նորին Սրբազնութեան տեսութեանց համաձայն տեղի ունեցած չեն, նորին Սրբազնութիւնը այդ պատճառաւ չզլանայ նկատուութեան առնելու Ազեքսանդրիացոց խնդիրքը որ, պէտք է ըսենք, միակ բանաւոր և օրինաւոր երբքն է Ազեքսանդրիան վերջնականապէս խաղաղեցնելու:

Արգէն այս տեսութիւնները պաշտօն յիշատակաբիր մը երեւոյթիանական ժողովին կողմէ նախապէս կարգուած յանձնախումբ մը պատրաստած ըլլալով, այդ յիշատակաբիրն ևս այս առթիւ մտաուցուած է Վսեմ: Պօղոս փաշայի նկատառութեան:

Կը յուսանք թէ նորին Վսեմութիւնը կարգաւոր այդ յիշատակաբիրը և միանգամայն ազգանալով վերագրեալ գումարման արտայայտած տեսութիւններուն և բաղձանքներուն՝ գոհ մնացած է և յանձն առած է միջամտել կեդրոնական վարչութեան մօտ, բառնալու համար այն ապեւելքները որոնցմով մինչև այսօր յետաձգուած է հաստատուած նոր գրութեան կիրարկութիւնը:

Ան եմն վստահօրէն կրնանք սպասել որ ինքիրը քիչ ժամանակէն պիտի ստանայ ամենուստ բաղձացուած լուծումը. և այս՝ անգամ մ'ալ իրաւունք կուտայ մեզի թելադրել մեր հայրենակիցներուն որ համբերութիւն ունենան և ս և է անխորհուրդ ընթացքով չվիժեցնեն յաջողութեան գուռը հասած զեզեցիկ գործ մը:

ԱՂԵՔԱՆԴՐՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՒՆԵՐԸ

Ըստ որում ամէն անհատ միեւնոյն կարողութիւնը և միեւնոյն խորհելակերպը չունի՝ կը հետեւի ոչ հանրային պաշտօն ստանձնողներուն գործունէութեան եղանակը յիրաւի կամ յանիրաւի, գիտակցաբար կամ անգիտաբար քննադատութեան առարկայ դառնայ մամուլին և հասարակութեան: Քաղաքական դաստիարակութենէ զուրկ ժողովուրդներու մէջ, քննադատութիւնը յաճախ արգիւնք է անձնական կիրքերու, որով ինչ աշխարհացոյցիչ նպատակէն, այսինքն գործերը լաւագոյն վիճակի մը բերել հասցնելու մտազրուածէն շեղելով վարչական մեքենան խանգարելու, բարի կամեցողութիւնները վնասեցնելու, օգտակար ուժերը ջլատելու պատճառ կ'ըլլայ ընդհանրապէս: Մեր մէջ, գաւառները կամ արտասահման, ուղղամիտ քննադատութիւններու զէմ յանդիման գոյութիւն ունին նաեւ ու նա՛մանաւանդ ստոր կիրքերէ յառաջ եկած յարձակումները որոնց աւելորդ է անգիտաբար հետեւանքները աստեղ մի առ մի յիշել:

Խօսքերնիս մասնաւորելով Նգիպտոսի, ու առաւելրապէս Աղեքսանդրիոյ հանրային գործերուն, արդարութիւնը պարտք կը զնէ մեր վրայ յայտարարել թէ տարիներէ իվեր իրարու յաջորդող քննադատութիւնները ու պայքարները բո-

րս ուրիշ ակադեմական հանդամանք ունեցած չեն.
պաշտօնի վրայ գտնուողներու անքաղաքացիաու-
թիւնը՝ հասարակութեան մէջ հաս ու հոն գտնուող
անպարկեշտ մարդոց անաղնուութեան հետ ան-
գիտակից համերաշխութեամբ մը՝ անձնական
կիրքերը բարբոքած և շատ մը անախօսօժ գէպ-
քերու տեղի տուած են: Եւ սակայն, ընդունե-
լով հանգերձ Ազեքսանդրիոց պաշքաշին այս փը-
տած կողմը, պատասխար ենք խօստովանիլ թէ
տեղւոյս հասարակութեան յուզումնալից պարե-
րական ցոյցերը օփնտկան արգարացում չախտի
կրնային գտնել եթէ երբէք ազգային պաշտօն-
ներու մէջ կամայականութեան տեղ Օրէնքի ըս-
կըղբանքը յարգուած ու գործադրութեան գը-
րուած ըլլար: Ի վաղուց յիտէ իրարու յաջորդող
տեղական մարմինները, ացառութիւնները յար-
գերով, ինքզինքնին անպատասխանատու նկատած
են Օրէնքին առջև. և Պատրիարքարանի իշխանու-
թիւնը, ինչ ինչ ու երբեմն անխօստովանելի նը-
կատումներով, քաջերած է տեղական մարմիննե-
րու ապօրինաւոր գոյութիւնը: Խնդիր չէ թէ կա-
մայական գրութեամբ պաշտօնի կաշուած անձեր
անհատական արժանիք կամ օգտակար գործու-
նէութիւն ունեցած ըլլան. միապետական եր-
կիրներու մէջ ալ կրնան երբեմն գտնուիլ թա-
գակիք գրութիւններ որոնք անհատապէս ազնիւ եւ
իրենց երկրին օգտակար հանդիսացած ըլլան:
Խնդիրը սկզբունքին վրայ է: Ո՞րն է ընդհանրա-

պէս օգտակարագոյնը. ձգե՞լ ո՞ր անհատ մը հան-
րային գործերը անպատասխանատու եղանակաւ
ժարէ, եթէ ոչ պարտաւոր բլլայ իր հասարակու-
թեան հսկողութեան տակ գանձելի և անոր ներ-
կայացուցիչներուն համարատու ըլլալ: Ընդուն-
ուած ճշմարտութիւն մըն է ո՞ր շատ մը խելքեր
միասին խորհելով՝ ընդհանրապէս աւելի
օգտակար եւ ուղիղ խորհուրդ մը կ'արտաբերեն
քան մէկ խելք մը առանձինն. նոյնպէս, հանրա-
յին պաշտօնեայ մը նուազ կը փորձուի մարդկա-
յին ակարութեամբ իր պարտականութենէն շե-
ղելու երբ հանրութեան հսկողութեան տակ կը
գտնուի, քան ա՞ն պաշտօնեայն որ առանց պա-
տասխանատու ըլլալու ո՞ր եւ է մէկու՝ իր ուղած
եղանակաւը և հսկողութենէ զուրկ կը գործէ:
Եւ յո ճշմարտութիւնն է ահա որ ծնունդ տուած
է հաւաքական խորհրդակցութեան և հսկողու-
թեան սկզբունքներուն, ուրիշ խօսքով՝ սահմա-
նադրական օրէնադրութեան որք թէ և խակ հա-
տարակութեանց համար իր ինչ ինչ անպատեհու-
թիւններէն զուրկ չէ, բայց և այնպէս ընդհա-
նուր կերպով շատ աւելի օգտակար արդիւնքնե-
րու կը յանգի քան քմածին և կամայական գոր-
ծունէութիւն մը:

(Շարունակելի)

ՔՕՆՈՒԹԱՆՅԱՅՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

(Շար. Յերգ թիւէն)

Դողոջուն ու յուզուած՝ կը մտնեմ ոստիկանատունէն ներս: Մութին մէջ, գրասենեակին զրան առջիւ, ուր կեցած է պահակ զինւոր մը, խոնուած է ամբոխ մը: Ճամբորդներ են, որոնք իրենց կարգին կսպասեն անցապի վաւերացման ձեւակերպութիւնը կատարելու համար: Ո՛ւֆ, ո՛վ պիտի սպասէ. բայց պահակը բարութիւնն կունենայ, անհամբերութեանս նըշաններուն հանդէպ, թոյլ տալու որ ներս անցնիմ:

Քօմիսարէն կը խնդրեմ որ հաճի արտօնաթուղթ մը չնորհել Աղեքսանգրիա մեկնելու համար.

- Տօմիուէ՛, ունտի բաշափօրթուլ վօսթրու (պարօն, ո՛ւր է անցապիրնիդ).

- Նամ բաշափօրթ. տիջէ ամ բէստութ օ (բաշափօրթ չունիմ. կորանցուցած եմ.)

- Չի սընթէյ (ի՞նչ ազգէ էք.)

- Արմեան (Հայ).

- Աթուճ այ բլաթիթ պիրուլ.՞ (տուրքերնիդ վըճարած էք).

- Տա, ուիթի քիթանցէլէ (այո՛, ահաւասիկ ընկալագիրները):

Ու գրապիրը արձանագրութեան տետրին մէջ նըշանակելէ ետքը անուես և ուրիշ պարագաներ՝ կը յանձնէ անհրաժեշտ արտօնաթուղթը, զոր պրեթէ կը յափըշտակեմ գրագրին ձեռքէն, հազիւ յաջողելով զսպել այս զիւանագիտական դուզնաքիտայ յազթանալիս ասթած ուրախութիւնը:

Մէկ ոստիւնով ինքզինքս կը գտնեմ ճամբորդներու նոյնութիւնը ստուգող զինւորախան պաշտօնետանին

առջև որ կեցած է, քարափէն նաւ. առաջնոյ դող առ-
ժամեայ կամբջակին վրայ: Պաշտօնեան արագ ու սուր
ակնարկ մը կը նետէ արտօնագրիս վրայ, կը ջանայ
դէմքիս, աչքերուս արտայայտութեան, արտաքին ելե-
ւոյթիս մէջ բազել իմ բարոյական հանգամանքիս մա-
սին վկայող տեղեկութիւնները, ու թոյլ կուտայ ինծի
անցնիլ: Կը զանափթիմ աւելի քան իր մասնեմ: չոզե-
նաւէն ներս Հոգիիս մէջ կը տարածուի անմիջապէս
թեթևացում մի անուշ զգացում մը որ կը նմանի բուն-
տէն ազատածի մը ըմբոջինամ անսահման զոհունա-
կութեան: Վերլուծելով այդ զգացումս՝ կը գտնեմ որ
կը բազկանայ հետեւեալ տարրերէն. ոռոմանական իշ-
խանութեանց օտարականները նկատմամբ ընդհանրա-
պէս և առանց անցազրի Հայերու համար մանաւորապէս
բունամ կեղեքիչ ընթացքին արդիւնքն և զող մշտական
երկիւզի մտաւորական վիճակին անհետացումը. ազատ
միջնուորաի մը յաջա՛րից հեշտանքին մօտալուս վա-
յելքը:

Իմիէրաթուլ Թրայա (այս է իր անունը որով մկրտած
է Ռուսէն կառավարութիւնը այդ չոզենաւը յաւերժա-
ցնելու համար լիշատակը Հոռմի Տրայիանոս կայսրին,
որ յազմելով Տակիաի բնակիչներուն, հռոմէական գաղ-
թականութիւն մը հաստատեց Դանուբի եզերքներուն
և Կարպաթեան լեռներու միջև) կը հանդի ծովուն
խաղաղ ու կանանչ վէտերուն փայփայանքներուն անձ-
նատուր, սիրուն հարսի մը պէս: Իր ներգաշնակ ու
վայելուչ մարմինն սպիտակութիւնը կը հակապատկերէ
ազլամուղչին թանձր ստուերներուն հետ:

Շողենաւը ժամը 12ին պիտի մեկնի. դեռ կանուխ
է: Կայցելեմ նաւուն բոլոր մասերը գազափար մը կազ-

միլու համար ֆրանսական նուային ճարտարագործութեան այս արտադրոյթին վրայ:

Մեքենանաներու սրահին (Ուլ տէ Մաչին) գոնակին առջև կը հանչիպիմ ֆրանսացիի մը, աշխոյժ, սրբամիտ, համակրելի մարդ մը: Ֆրանսական տունին Լողմէ նաւուն երկու ֆրանսացի մեքենավորներուն վրայ հսկելու պաշտօն ստանձնած է վեց տմարտան համար, ինչպէս սովորութիւն է: Հայրենասիրական անկեղծ ու խորունկ հաճութով մըն է որ այս ֆրանսացիները կը կատարեն իրենց պարտականութիւնը: Յըրանսացին ուրախ էր որ Ռումէն կառավարութիւնը երկու նաւերուն ապսպրանքը յանձնած էր ֆրանսական Տան մը: Անհաւատալի միամտութեամբ մը կը գտտափետէր գերմանական և նոյն իսկ անգլիական նաւաշինութեան ճարտարագործութիւնը:

- Արդէն, աւելցուց, ինչպէս թերիս զիտէք, Եւրոպական պետութեանց արտաքին քաղաքականութեան հետապնդած առարկայականներէն մին է Եւրոպական Արեւելքի փոքր երկիրներու մէջ հրապարակներ ստեղծել:

Աւստրիա Հունգարիա, իբր զրացի Ռումանիոյ, Գերմանիա, շնորհիւ Քարօլ թագաւորին որ Հօէնձօլէններու գերմանական արքայական գերդաստանէն սերելով իր ցեղին չահերուն նպաստաւոր ուղղութեան մը կը հետի իր կառավարած երկրին անտեսական ինքիւններուն լուծման մէջ, զրկթէ ամբողջապէս զրաւած են ռումանական հրապարակը: Իրաւ է թէ Ռումէնները, իբր մեր լատին եզրայրները, իրենց բանակը մերինին օրինակին վրայ կազմակերպած են, մեր օրինազիրքն իրենցը ըրած են, Իրաւ է թէ Պուլքերէշ փոքրիկ Բարիկ մըն է, և ժողովուրդը ուրիշ ոչինչ կը փա-

իագի բայց եթէ ամէն բանի մէջ մեզի կապելու, ընդօրինակել, բայց զիբաւ կրմբունէք որ այս ամէնը, քաղաքականութեան արդի բմբունութիւն համեմատ, պատանական նշանակութիւն մը միայն կրնայ տննել մեզի համար: Տեսէք, ձեր խնդրին համար, հախտալ մեր փողովուրդին կամքին, հախտալ մեր վեհանձն աւանդութեանց, հախտալ մեր քաղաքակրթիչ պատմական պաշտօնին, չուզեցինք չկրցինք միջամտել կասեցնելու համար ձեր բարբարոս տէրերուն արիւնշաղտիս ետ թ ազան ր ինչո՞ւ, որովհետ՝ մեր նիւթական շահերը չէին թուլարեր, սրովհետ՝, նաև, չէինք կրնար զոհել Ռուսիոյ հետ մեր դաշնակցութիւնը ու բարեկամութիւնը, որոնք եւրոպական համերգին մէջ մեր մեծ Պետութեան գիրքը կ'ապահովեն Հետաբար, իրաւունք ունինք նաևերու ապսպրանքին մէջ տննելու մեր Ռուսմանիոյ հետ տնտեսական յարաբերութեանց լուացման նշան մը:

Ոչ առիթը ըլլալով ոչ ալ արամագրութիւն ունենալով քաղաքականութեան վրայ վիճաբանութեան մէջ մտնելու Ֆրանսացիին հետ՝ յարմար կը դատեմ իր կարծիքներու համաժիտ երկնալ, ու, արդէն մեքենաներուն -այդ չափագիտական ստուգութեան, վերածուած երկաթները- տափակ ու տհաճոյ տեսարանէն տաղտկաշաճ՝ կը վերադառնամ նաևուն կամուրջին վրայ:

(Շարունակելի)

Ա. Ճ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Հ. Յ. Դ. Կարմիր Խաչի Տիկմանց Միուլթիւնս պատիւ ունի իմացնել Աղեքսանդրիոյ ազգայիններուն թէ կազմակերպած է հանդէս մը որ տեղի պիտի ունենայ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ԼՍԱՐԱՆ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ սրահին մէջ, փետրուար 24ին, յառաջիկայ կիրակի, կէսօրէն յետոյ ժամը 3ին:

Այս հանդէսին պիտի մասնակցին.

Տ. Արամ Ալպան (Երաժշտութիւն ջութակի վրայ)

Օր. Վարդուհի (Բանաստեղծութիւն ոտանաւոր)

Երգեցիկ Երկսեռ խումբ մը Հայկական երգերով

Տ. Գլըճճեան (Բանախօսութիւն)

Մանուկներու խումբ մը (Ոտանաւոր արտասանութիւններով)

Միութիւնս կը յուսայ որ Աղեքսանդրիոյ հայ գաղութը պիտի փութայ ներկայ գտնուիլ այս հանդէսին որուն հասոյթը պիտի յատկացուի գերազանցապէս ազնիւ նպատակի մը սրպիսին է հայ բամտարկեալ եղբայրներու օգնութիւնը:

ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

ԿԵՍԱՐԵԱՆ ԵՂՔԱՐՑ ՄՆԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՌԻՐԻ

Վլադ Խօսքի անցեալ թիւին մէջ խօսելով
Կ. Պօլսոյ Կեսարեան եղբարց անանկութեան մա-
սին բաժնէնք թէ՛ Ալեքսանդրիոյ ճիւղին նօ-
րէն Տ. Ներսէս Կեսարեան այդ անանկութենէն
քանի մը ամիս առաջ թէ՛ Լ բաժնուած է Կ. Պօլ-
սոյ Մայր Տունէն, բայց այդ բաժանումը առե-
տըրական աշխարհին չէ ծանուցած հասնաւոր
չըջաբերականով մը, ինչպէս պէտք է ընել առ-
հասարակ:

Արդ, կ'երևայ որ մեր լրատուն այդ մասին
մեզ բողոքովին սխալ տեղեկութիւն մը տուած
է, որովհետեւ ամենահաւաստի աղբիւրէ տեղե-
կացանք եւ, մեր աչքերով ալ տեսանք, որ Տ.
Ներսէս Կեսարեան, 4 նոյեմբեր 1906 թուական
կրող տպեալ չըջաբերականով մը, օրինաւորապէս
ծանուցած է իր բաժանումը Կ. Պօլսոյ Մայր
Տունէն:

Գոհութեամբ կ'ուզուենք մեր տուած տեղե-
կութեանց այդ սխալ մասը, զոր արդէն ուզւած
էին տեղոյս եւրոպական թերթերը:

ՀԱՐՄՆԻՔ

Վազը, Կիրակի, 17 Փետր. Գահիրէ, Հայոց Լա-
րան Ընթերցատան սրահին մէջ տեղի կ'ունենայ մեր
բարեկամ Տ. Կարապետ Երզնկացեանի ամուսնութիւնը
Օր. Լուսնթազ Հայագործանի հետ:

Մեր ջերմ բարեմաղթութիւնները նորապսակ ա-
մուսնուին:

ZINCOGRAPHIE



HENGER NAZARETHIAN
ALEXANDRIE. RUE STAMBOUL

HENGER
NAZARETHIAN.
RUE
STAMBOUL



ZINCOGRAPHIE

“ԱՋՍ ԽՕՄՔ”-ի Գալանները

ԱՋՍ ԽՕՄՔ - 40 ՉՐՏԱՐԱՆՈՒՄ ԵՄԲՈՒ ՕՐԵՐԸ

Սղիսոսի համար քանկելին է

40 ՔԻՐԸ	40 ԴՐԸ ՈՂՁ
20 ..	20

ԱՐՑԱՍԱՀՄԱՆ

ԵՐՐԱՍ	40 ՔԻ	10 ՏՐԱՐ
ՔԱՐՍ	4 ՔՈՒՄԼ
ԱՍԵՐԱՍ	2 ՏՈՒՐ

Ուժանորդագրուիւնը կանխիկ

ՀԱՏԻ 1 ԴՐԸ ՈՂՁ

“ԱՋՍ ԽՕՄՔ”-ի համար քանկելին կամ
որ է է գրուիլին պէտք է ուղղել հե-
տևեայ հասցէին”

H. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE (EGYPTE)

Մանուգրովներ կրկնուիլին մանուա-
րագրուներուց:

Կառուցուածու . Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպ. Գորգ Կ ԽԱՂԱՔԻՆԱՆ ԱԼԵՎՈՒՆԻՅԱՆ